

Նոյն օրը պատահած հրաշքի մը ականգութիւնն է զոր կը յիշատակէ Ս. Եպիփան. իր խօսքերն են. «Յիստ զարմանալի հրաշքով մը զակազակ սեղեր կը տեսնուէին շատ աղբիւրներ եւ առուակներ որոնց ջուրը կը փոխուէր գինիի, կամ ջուրը կ'առնէր զինիի համը եւ գոյնը՝ Յիսուս Քրիստոսով կատարուած հրաշքին տարեգործի օրը: Ան կը հաւաստէ թէ ինքն իսկ ճաշակած է գինիէն այս աղբիւրներէն մէկուն որ Փոքր Ասիոյ Cibyreի մէջ կը գտնուէր. ու կը յայտարարէ թէ իրեն ծանօթ վանականներ միեւնոյնը զգացած են ուրիշ աղբիւրէ մը որ Արաբիոյ ճարաշ քաղաքը կը գտնուէր: Ան կ'աւելցնէ նաև թէ ոմանք ալ միեւնոյնը կը յայտնեն Նեղոս գետին տեղի մը ջուրերու մասին, և թէ Եգիպտացիները Աստուածայայտնութեան տունին անկէ ջուր առնելով կը պահէին իրենց տուները» (E. F. B. էջ 221):

5. Տիբերիա. — Տիբերիա հիմնուած է Հերովդէս Անթիպասէն՝ մեր թուականին 17 տարիին: Հերովդէս Գալիլիոյ չորրորդապետն էր, որ իր մայրաքաղաքը ըրաւ զայն: Ան տուաւ անոր անուն մը զոր պահեց մինչև այսօր, ի պատիւ Տիբեր կայսեր:

Դ. դարուն, Յովսեպոս՝ Տիբերիոյ նշանաւոր հրեաւորներէն մին քրիստոնէութեան դարձաւ: Կոստանդիանոս կայսր բարձրացուց զանիկա Գալիլիոյ կոմսութեան և թոյլատրեց Ազրիանոսէն շինուած մեհեանը եկեղեցիի փոխելու: Թէպէտև հրեաներու պատճառած նեղութեանց հետեւանքով Յովսեպոս Սկիւթոպոլիս քաջուեցաւ, բայց քրիստոնեաներու թիւը Տիբերիոյ մէջ արագօրէն աւելցաւ: Անոր առաջին եպիսկոպոսը Յովհաննէս կը կոչուի: Յուստինիանոս նորոգած է Տիբերիոյ պարիսպները: